

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՀՀԿԳՄՍՆՄԱԱՊՁԲ-22/42**

« 03 » « 05 » 2022թ.

ք. Երևան

Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար՝ Գ.Սաֆարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ) միկրոմից, և «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն՝ Ա.Գալստյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Վաճառող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1. Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը:

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը:

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից:

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողը էականորեն խախտել է պայմանագիրը:

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում:

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ձևնել ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդն պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողը իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 65842150(վաթսուհինգ միլիոն ութ հարյուր քառասուներկու հազար մեկ հարյուր հիսուն) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.2 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում գնորդը վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ապրանքի մատակարարման համար նախատեսված օրը ներառյալ Վաճառողը Գնորդին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը և հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 15 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 1.1 կետում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք մատակարարելու յուրաքանչյուր դեպքում Վաճառողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի գնի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ապրանքի մատակարարումը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն Գնորդի կողմից այդ չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ պայմանագիրը կնքելու նատակով կազմակերպված գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Վաճառողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Գնորդը միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Գնորդը չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Վաճառողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Գնորդի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.6 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը, իսկ Վաճառողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ,

քան պայմանագրով սկզբանե մատակարարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի

8.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.9 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու իմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Գնորդը այն ուղարկվում է նաև Վաճառողի էլեկտրոնային փոստին:

8.10 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.11 Պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1 և N 2 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.12 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի
և սպորտի նախարարություն

Ք. Երևան, Կառավարական տուն 2

ՀՀ ՖՆ աշխատակազմի

գործառնական վարչություն

Հ/Հ 900011005130

ՀՎՀՀ 02698732

Գլխավոր քարտուղար՝

Գ.Սաֆարյան

/ստորագրություն/

ՎԱՃԱՌՈՂ

«Էդիթ Պրինտ» ՍՊԸ

Ք. Երևան, Դավիթ Մալյան 43

«Արմավիսբանկ» ՓԲԸ

Հ/Հ 25000118400210

ՀՎՀՀ 00009253

Տնօրեն՝

Ա. Գալստյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Հավելված N 1
2022թ. կնքված
« 03 » 05
ՀՀ ԿԱՍՏԱՆԱԿԱՆ ԲՆԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՆԿ

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆԱԿԱՆԱԿԱՆ ԲԱՆԿ-ԳՆԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Ձևերի համար	Գնումների պայմանագրի միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	Ապրանքի		Տեխնիկական բնութագիր	Հավանական աճի արագություն	Քանակը	միավոր իգիներ, ՀՀ դրամ	ընդամենը ինքն, ՀՀ դրամ	Մատակարարման ժամկետը
		Անվանումը, ապրանքային նշանը	Դասագրքեր						
1.	2211110-50		Դասագրքեր	Գնման առարկա է հանդիսանում «Այբբենարան 1» /1-ին դասարանի դասագիրք/, հեղ.Ա.Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան Բովանդակային չափանիշներ Դասագիրքը կազմված է ծրագրային և չափորոշային պահանջների հաշվառմամբ և նախատեսված է վեց տարեկան երեխաների գրաճանաչության ուսուցման համար: Գրաճանաչությունն ընդգրկում է բուն գրառուցման կամ տառուսուցման, կարդալու և գրելու կարողությունների ձևավորման, բառապաշարի հարստացման, խոսքի զարգացման, ճանաչողական գիտելիքների հարստացման, լեզվական նախագիտելիքների ուսուցման, վերլուծական և համադրական կարողությունների ձևավորման և այլ նպատակներ ու խնդիրներ, որոնց իրականացմանն էլ ծառայում է դասագիրքն իր տարբեր բաժիններով: Այբբենարանն ունի ինչպես ճանաչողական, այնպես էլ դասատիարակական արժեք: Ընդգրկվող թեմատիկաներն են՝ ընտանիք, դպրոց, հայրենիք, կենդանական և բուսական աշխարհ, մանկական աշխարհ, դաստիարակում է ծնողափոխություն, հարգանք մեծերի նկատմամբ, ուսուցչի նկատմամբ, հոգատարություն փոքրի ու անպաշտպանի նկատմամբ, ընկերասիրություն, մարդասիրություն, բարություն: Իրականացվում է ժողովրդական մանրապատում ստեղծագործությունների ուսուցում: Լեզվական նախագիտելիքների ուսուցում՝ հետևյալ ընդգրկումով՝ պատմություն, նախադասություն, բառ, վանկ, հնչյուն, ձայնավոր, բաղաձայն, տառ, մեծատառ, փոքրատառ, երկհնչյուն և եռահնչյուն տառեր, գաղտնավանկ, գրության երկու ձև ունեցող հնչյուններ, վանկատում, տողադարձ: Տեխնիկական չափանիշները Չափսը՝ 20x26 Թուղթը՝ օֆսեթ 80գ.	հատ	11226	1500	16839000	Մինչև ս/թ օգոստոսի 15-ը

2.	22111110-52	Դասագրքեր	Էջաքանակը՝ 128 Կազմը՝ ֆուտբոլ 270 գ. լամինացված Գնման առարկա է հանդիսանում «Մայրենի 1», /1-ին դասարանի դասագիրք/, հեղ.՝ Ա.Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան Բովանդակային չափանիշներ Դասագիրքը նախատեսված է ՀՀ հանրակրթական դպրոցի առաջին դասարանի համար: Շարունակությունն է «Այբենարան» դասագրքի: Համապատասխանում է ՀՀ ԿԳՆ ծրագրային և չափորոշչային պահանջներին: Կազմված է համակցված դասագրքի սկզբունքներով՝ ըստ որի ընթերցանության և լեզվական տարրական գիտելիքների ուսուցումն ու կարողությունների ձևավորմանն ուղղված առաջարկները մեկտեղված են: Բովանդակային առումով դասագրքը շարունակում է «Այբենարանի» ճանաչողական ու դաստիարակչական թեմատիկ ու գաղափարական ուղղվածությունը՝ դպրոց, դպրոցական կյանք, ընկերասիրություն, ընտանիք, ընտանեկան փոխհարաբերություններ, տոներ և դրանց դրսևորումն ընտանիքում, հայրենիք, հերոսներ, քնություն, տարվա եղանակներ, հեքիաթների աշխարհ: Վ Շարունակվում է ծանոթացումը ժողովրդական մանրապատում ստեղծագործություններին: Լեզվական արդեն ծանոթ նախագիտելիքների ամրակայում և ընդլայնում, նոր գիտելիքների հաղորդում. պատմություն, նախադասություն, բառ. վանկ, հնչյուն, ձայնավոր, բաղաձայն, տառ, մեծատառ, փոքրատառ, երկհնչյուն և եռահնչյուն տառեր, գաղտնականկ, գրության երկու ձև ունեցող հնչյուններ, վանկատում, տողադարձ ճանաչվում») և բնություն (տարվա եղանակներ՝ «Աշնան գույները», «Արձաթե թիթեռնիկների ժամանակը»): Առաջին թեման ներկայացված է ընթերցանության 16 նյութերով: Կենտրոնում հայրենիքն է, հայրենի տունը, հարազատ հողը, լեզուն: Հայրենիքը ներկայացված է տարբեր կողմերով: Հայրենիքը մարդու և իր նախնիների ծննդավայրն է, մարդու տունը, նրա ընտանիքը, ծնողները, մարդն ինքը՝ իր միջավայրում, մարդն իր գործերով: Մյուս թեման ներկայացված է 2 բաժնով և ընթերցանության 8 նյութերով: Սրա կենտրոնում տարվա եղանակներն են՝ աշունն ու ձմեռը, որոնք ներկայացված են թե՛ իրենց գեղեցկությամբ ու բնորոշ առանձնահատկություններով և թե՛ Հայաստանը բնորոշող խորհրդանիշներով (տուռ, խաղող): Դասագրքում կարևոր տեղ է վերապահված «Իմ տեղեկատուն» բաժնին, որում ներկայացված են լեզվական գիտելիքներ (սեղմ բացատրություններ՝ համապատասխան օրինակներով): Վերջում գետեղված է ուղղագրական բառարան: Այստեղ տրված են ընթերցանության տեքստերում և գործնական առաջարկանքներում հանդիպող այն բառերը, որոնք ուղղագրական դժվարություն ունեն: Տեխնիկական չափանիշները 2ափսղ՝ 20 x 26	հատ	6318	1430	9034740	Մինչև ս/թ օգոստոսի 15-ը
----	-------------	-----------	---	-----	------	------	---------	-------------------------------

3.	2211110-60	Դասագրքեր	Թուղթ՝ օֆսեթ 80գ. Էջաքանակ՝ 64 Կազմը՝ ֆուտբոլ 270 գ. լամինացված Գնման առարկա է հանդիսանում «Մայրենի 2», 1-ին մաս, /2-րդ դասարանի դասագիրք/, հեղ.՝ Ա.Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան Բովանդակային չափանիշներ Դասագիրքը նախատեսված է ՀՀ հանրակրթական դպրոցների երկրորդ դասարանի համար: Կազմված է համակցված դասագրքի սկզբունքով: Դասագրքի առաջին մասն ունի թեմատիկ հետևյալ բովանդակությունը՝ «Դու մեր դպրոց սիրելի», «Մեր տունը», «Ոսկի աշուն», «Մանուկների աշխարհում», որը ոչ միայն նպաստում է բազմաբնույթ ու բազմակողմանի ճանաչողական գիտելիքների ձեռքբերմանն ու հարստացմանը, այլև համապատասխան արժեքային համակարգի ձևավորմանը: Շարունակվում է ծանոթացումը ժողովրդական մանրապատում ստեղծագործություններին: Լեզվական տարրական գիտելիքների ուսուցումն իրականացվում է համապատասխան մեթոդական կառույցի միջոցով՝ փոքրիկ նյութերի և վարժությունների համակարգով՝ առաջին դասարանի նյութի ամրակայման, ծավալման ու խորացման սկզբունքով: Նախադասություն, նախադասությունողղագրություն, բառ, բառակապակցություն, հնչյունևտառ, գլխատառևփոքրատառ, ձեռագիրևտպագիրտառեր, ձայնավոր և բաղաձայն, վանկ, վանկատում, տողադարձ, ձայնավորների և բաղաձայների ուղղագրություն, գրության և արտասանության տարբերվող բաղաձայների ուղղագրություն, տողադարձ, մոտ և հակառակ իմաստներ ունեցող բառեր, ընդհանուր և մասնավոր իմաստներ ունեցող բառեր: Դասագիրքը նպաստում է կարդալու գրելու, պատմելու կարողությունների զարգացմանն ու կատարելագործմանը, բառապաշարի հարստացմանը, խոսք կառուցելու կարողությունների զարգացմանը, գիտելիք խոսքում կիրառելու կարողությունների ձևավորմանը, արժեքային համակարգի ձևավորմանը: Տեխնիկական չափանիշներ Չափսը՝ 16.5 x 24 Թուղթ՝ օֆսեթ 70գ. Էջաքանակ՝ 88 Կազմը՝ ֆուտբոլ 270 գ. լամինացված	հատ	7773	850	6607050	Մինչև ս/թ օգոստոսի 15-ը
----	------------	-----------	---	-----	------	-----	---------	-------------------------------

4.	22111110-63	Դասագրքեր	Գնման առարկա է հանդիսանում «Մայրենի 2», 2-րդ մաս, /2-րդ դասարանի դասագիրք/, հեղ.՝ Ա.Քյուրքչյան, Լ.Տեր-Գրիգորյան Բովանդակային չափանիշներ Դասագիրքը նախատեսված է ՀՀ հանրակրթական դպրոցների երկրորդ դասարանի համար: Կազմված է համակցված դասագրքի սկզբունքով: Դասագրքի երկրորդ մասն ունի թեմատիկ հետևյալ բովանդակությունը՝ «Ձյունների թագավորության մեջ», «Լավ ու բարի գործեր», «Իմ անոշիկ Հայաստան», «Գարոնն է, սիրուն է», որը ոչ միայն նպաստում է բազմաբնույթ ու բազմակողմանի գիտելիքների ձեռքբերմանն ու հարստացմանը, այլև համապատասխան արժեքային համակարգի ձևավորմանը: Շարունակվում է ծանոթացումը ժողովրդական ստեղծագործություններին: Լեզվական տարրական գիտելիքների ուսուցումն իրականացվում է համապատասխան մեթոդական կառույցի միջոցով՝ փոքրիկ նյութերի և վարժությունների համակարգով՝ առաջին դասարանի նյութի ամրակայման, ծավալման ու խորացման սկզբունքով, ինչպես նաև ներառում է լեզվական նոր հասկացությունների ուսուցում: Բառ, բառակազմություն /արմատ, ածանց, պարզ, ածանցակիր, բարդբառեր, բաղադրյալբառերի ուղղագրություն/, առարկա, հատկանիշ, գործողությունացուցականներ, հասարակահաստականուններ, հատուկանունների ուղղագրություն, եզակիև հոգնակի թիվ, նախադասություն, պարզ համադրույթ և պարզ ընդարձակ նախադասություններ, անցած գիտելիքների ամրակայում և խորացում: Դասագիրքը նպաստում է կարդալու, գրելու, պատմելու կարողությունների զարգացմանն ու կատարելագործմանը, բառապաշարի հարստացմանը, խոսք կառուցելու կարողությունների զարգացմանը, գիտելիքը խոսքում կիրառելու կարողությունների ձևավորմանը, արժեքային համակարգի ձևավորմանն ու դաստիարակությանը: Տեխնիկական չափանիշներ Չափսը՝ 16.5 x 24 Թուղթ՝ օֆսեթ 70գ. Էջաբանակը՝ 88 Կազմը՝ ֆոտոբրտ 270 գ. լամինացված	հատ	7773	850	6607050	Մինչև և/թ օգոստոսի 15-ը
5.	22111110-74	Դասագրքեր	Գնման առարկա է հանդիսանում «Ռուսաց լեզու 3», 1-ին մաս, /3-րդ դասարանի դասագիրք/, հեղ.՝ Բ.Նաչաջանյան, Վ.Խանգրատյան Բովանդակային չափանիշներ Դասագիրքը պետք է ապահովի նյութի ընկալումը և դրա քայլ առ քայլ (կող առ փուլ) ամփայլացումը: Առաջին կիսամյակի բոլոր դասերը պետք է կրեն համապարփակ բնույթ՝ լեզվի և խոսքի փոխկապակցված ուսուցում: Թեմաները պետք է ներկայացված լինեն հետևյալ լեզվաբանության բաժիններում՝ հնչյունաբանություն, բառապաշար, բառի ձևավորում, ձևաբանություն, շարահյուսություն: Առաջին	հատ	7282	780	5679960	Մինչև և/թ օգոստոսի 15-ը

6.	2211110-76	Դասագրքեր	կիսամյակի լեզվական նյութը պետք է ապահովի հետևյալ բաժինների ուսումնասիրությունը՝ նախադասության, հնչյունների և տառերի, բառի (ծիշտ արտասանություն, ուղղագրության ճիշտ գրություն, շեշտ և այլն, նախդիրներ, ով, ինչ հարցերին պատասխանող բառեր), կրկնությունը: Տեխնիկական չափանիշներ Չափսը՝ 20 x 26 Թուղթը՝ օֆսեթ 70գ. Էջաքանակը՝ 80 Կազմը՝ ֆուտբոլ 270 գ. լամինացված Գնման առարկա է հանդիսանում «Ռուսացելու 3», 2-րդ մաս, /3-րդ դասարանի դասագիրք/ հեղ.՝ Բ.Նսաջանյան, Վ.Խանգրատյան Բովանդակային չափանիշներ Դասագրքի 2-րդ մասը նույնպես պետք է ապահովի նյութի ընկալումը և դրա քայլ առ քայլ (փուլ առ փուլ) ավելացումը: Երկրորդ կիսամյակի դասերը պետք է ապահովեն լեզվաբանական, խոսակցական, մշակութաբանական կարողություններ հետևյալ բաժիններով՝ ձևաբանություն՝ և շարահյուսություն (բայ, գոյական, ածական և թվական անուններ, դերանուններ), տեքստը՝ որպես լեզվական միավոր, ընտրված է տվյալ թեմաներին համապատասխան: Դասագիրքը պետք է համապատասխան լինի ուսաց լեզվի ծրագրին և ապահովի լեզվի կիսամյալ ուսուցումը: Տեխնիկական չափանիշներ Չափսը՝ 20 x 26 Թուղթը՝ օֆսեթ 70գ. Էջաքանակը՝ 88 Կազմը՝ ֆուտբոլ 270 գ. լամինացված	հատ	7282	850	6189700	Մինչև ս/թ օգոստոսի 15-ը
7.	2211110-86	Դասագրքեր	Գնման առարկա է հանդիսանում «Մայրենի 4», 1-ին մաս /4-րդ դասարանի դասագիրք/ հեղ.՝ Դ. Գյուրջինյան, Ն. Հեքեքյան Բովանդակային չափանիշներ Դասագրքում զետեղված են բազմաթիվ տեքստեր՝ հայ և օտարազգի դասական ու ժամանակակից հեղինակների չափածո և արձակ ստեղծագործություններ (կամ հատվածներ), բանասիրության նմուշներ և գիտահանրամատչելի փորձառական նյութեր: Սա հնարավորություն է տալիս ուսուցման ընթացքում արևելքում ստեղծելու գրական նյութի և կյանքի միջև, ընդլայնելու տվյալների աշխարհաճանաչությունը, նրանց ծանոթացնելու լեզվի տարբեր ոճերի: Դասագրքում զետեղված նյութերը տարաբնույթ աշխատանքի հնարավորություն են ընձեռում: Մի կողմից դրանք նպաստում են այնպիսի հմտությունների ձևավորմանը, ինչպիսիք են վերլուծելը, փաստերը համարելը, կշռադատելը, սեփական մտքերն ու կարծիքը հայտնելը, մյուս կողմից՝ լեզվական իրողությունների շուրջ կառուցված վարժություններն ու առաջարկանքները միտված են ոչ թե սոսկ գիտելիքի ձեռքբերմանը, այլ	հատ	9021	780	7036380	Մինչև ս/թ օգոստոսի 15-ը

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՓԻԱՆԻՉՆԵՐԸ

ԲԱՇԽԱՄԱՆՑՈՒՑԱԿ

Ձախարքային	Անվանումը	Երևա նիքը	Տարած ված մարզի կոդը	Լուծու ման համար	Շիրակի մարզի տարած ված համար	Արագած ոտնի մարզի տարած ված համար	Կոտայք ի մարզի տարած ված համար	Գեղարքո անի մարզի տարած ված համար	Արմավի րի մարզի տարած ված համար	Արարա տի մարզի տարած ված համար	Վայոց- ձորի մարզի տարած ված համար	Սյունիք մարզի տարած ված համար	Ոչ պետա կան հանր ակադ եմիա նական ուսում նական հաստ.	Ընդամենը
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12	13	14	15
1	Դասագիրք «Այբբենարան 1»	3491	353	617	432	471	1834	359	1458	1169	271	326	445	11226
2	Դասագիրք «Մայրենի 1»	1517	252	392	289	391	649	305	782	869	81	224	567	6318
3	Դասագիրք «Մայրենի 2», 1-ին մ.	2322	256	685	406	389	973	212	1082	684	182	191	391	7773
4	Դասագիրք «Մայրենի 2», 2-րդ մ.	2322	256	685	406	389	973	212	1082	684	182	191	391	7773
5	«Ռուսացելու 3» 1-ին մաս	2069	198	600	906	389	1070	508	171	606	66	522	177	7282
6	«Ռուսացելու 3» 2-րդ մաս	2069	198	600	906	389	1070	508	171	606	66	522	177	7282
7	Դասագիրք «Մայրենի 4», 1-ին մ.	2871	237	897	553	435	834	695	709	790	155	366	479	9021
8	Դասագիրք «Մայրենի 4», 2-րդ մ.	2871	237	897	553	435	834	695	709	790	155	366	479	9021
Ը Ն Դ Ա Մ Ե Ն Ը		19532	1987	5373	4451	3288	8237	3494	6164	6198	1158	2708	3106	65696

Ծանոթություն * 1. Ոչպետական հանրակրթական ուսումնական հաստատությունների դասագրքերը թողնվում են ի պահ «Էդիթ Պրինտ» ՍՊԸ-ում: Ոչպետական հանրակրթական ուսումնական հաստատությունների դասագրքերով պահվող և նպատակով «Էդիթ Պրինտ» ՍՊԸ հրատարակչությանը կտրամադրվի բաշխման ցուցակ:

2. ՀՀ մարզպետարաններին և Երևանի քաղաքապետարանին հատկացվող դասագրքերի քանակի մեջ ներառված է ՀՀ ԿԳՄՍՄ Ենթակայությանը գործող հաստատություններին հասանելի դասագրքերի քանակը:

3. ՀՀ մարզպետարաններին և Երևանի քաղաքապետարանին կտրամադրվեն բաշխման ցուցակներ՝ ըստ հանրակրթական ուսումնական հաստատությունների:



ՎԱՃԱՌՈՂ

Գ. Սահարյան

Ա. Գալստյան

